

բաղդատմամբ: Հալ աղգաբնակութիւնը լօրինում է աստ տեղ տեղ հոծ և տեղ տեղ ցանցառ, մի շարալարեալ բաղմամբութիւն որ սփռուում է սարահարթի մի ծալրից միւսը՝ արեւելքից դէպի արեւմուտք, և որպէս դուրս ցցուած մի ժալռ անջատում է մահմեդական բնակիչների երկու ճիւղերը իրարուց՝ Քիւրդերին դէպի հարաւ, և թուրքերին դէպի հիւսիս... Պէտք է աչքի առաջ ունենալ այն գլխաւոր տեղը, որ Հայերը գրաւում են երկրի տնտեսական ասպարէզում, և չմոռանալ այն լալտնի ապացոյցը թէ Թուրքիոյ նահանգների հալ աղգաբնակութիւնը ընդունակ է խիստ արագ աճման ապրուստի բարերար պայմանների տակ: Եթէ արհեստն ու երկրագործութիւնը տակաւին պահպանում են իրենց խղճալի գոլութիւնը, ալդ նոքա պարտական են հալ գիւղացիին...»:

Եթէ ցանկանալինք բոլոր հետաքրքրական հատուածներն առաջ բերել, պէտք է պ. Տօնապետեանի գրքոյկի կէսն արտագրէինք, ուստի խորհուրդ ենք տալիս ընթերցողներին ձեռք բերել ալդ աշխատութիւնը:

Գրքի վերջը կցուած են նշանաւոր արեւելագէտների և անգլիական լուրջ մամուլի քննադատական և գովասանական խօսուածները լինելի «Արմենիալի» մասին, որից երևում է թէ Բրնչպիսի միահամուռ և չտեսնուած ընդունելութիւն է դրել ալդ չքեղ և իմաստալի աշխատութիւնը:

2. Յ. Ա. ԴՕՐԲՕԼԻԽԻՐՈՎ. Աղէքսանդր Գալացցի քահանան եւ իւր քարոզները. Թարգմ. Դէորգ քահ. Մկրրտումեանց. Ս. Պ. Բ. 1902 թ. 25 կ.

Աղէքսանդր Գալացցին Աստուծոյ խօսքը քարոզող այն երջանիկ մարդկանցից է, որոնք բնատուր ձիրք ունին անկեղծ ոգևորութեամբ ժողովրդի հետ խօսելու: Գալացցուն ոգևորող վսեմ գաղափարը հայրենասիրութիւնն էր. խառնալի վերածնութեան երջանիկ ժամանակի հարազատ զաւակն էր Գալացցին և խառնական աղգալին հերոս Գաբրիելալիի զինակիցն ու գաղափարակիցը: Նրա ճարտասան լեզուով ասած քարոզ ճառերը մեծ տպաւորութիւն էին թողնում բաղմաթիւ ունկնդիրների վրայ և նրանց ոգևորութեան դադաթնակէտին հասցնում. նա խօսում էր խառնալի ազատութեան և միութեան

մասին, պապի քաղաքական իշխանութեան դէմ և զայրութի
որոտընդոտ շանթեր էր արձակում Բուրբունների կառավա-
րութեան հասցէին: Բայց նա միայն խօսքի մարդ չէր, քա-
րողներով և ճառերով չէր բաւականանում, այլ անմիջական
գործակցութիւն ունէր իտալիայի ազատութեան պատերազմ-
ներում և դէնքը ձեռքին պաշտպանում էր իւր քարոզած գա-
ղափարը. պատերազմի դաշտից նա երբեմն ուղղակի թատրոն
էր մտնում և ներկայացում ընդհատելով՝ իւր կրակոտ ճառերն
արտասանում և նոր տեղեկութիւններ տալիս...

Ռուս լալտնի քննադատ Դօբրոլիւբովը հերոս քահանայի
ճառերից մի քանիսը թարգմանելով ռուսերէն՝ տպագրում է իւր
գիտողութիւններով միատեղ և Գէորգ քահ. Մկրտումեանն էլ
Դօբրոլիւբովի այս աշխատութիւնն է, որ թարգմանելով տալիս
է հալ ընթերցողների ձեռքը: Յաջող ընտրութիւն է. մեր
թարգմանիչներն եթէ անկեղծ կերպով ցանկանում են հա-
ժողովրդին ընթերցասիրութեան վարժեցնել, պէտք է նիւթի
ալմպիսի ընտրութիւն անեն, որ հասկանալի լինի և կարդա-
ցողին էլ եթէ ոչ օգուտ, գոնէ հոգեկան զուարճութիւն պատ-
ճառեն. զանազան «հասարակական թէօրիաների» ու պրօֆ.
Բէրգսիկովի աշխատութեան թարգմանութիւնների պէս ան-
մարտելի նիւթերը մատչելի չեն մեր ժողովրդին և անկարող
են նրա ընթերցասիրութեան օգտին ծառայել:

Լ. Մկրտումեանի հայերէն թարգմանութիւնը տարա-
բաղաբար ստրկօրէն է կատարուած. գրքի մէջ կան ռուսե-
րէն դարձուածների բառացի թարգմանութիւններ, որ կամ հա-
լերէն չեն և կամ ուղղակի անհասկանալի են. առաջ բերենք
մի քանի օրինակ. «Ի ն չ պ է ս իմացաւ դրանց վտ նահան-
ջելը, իսկոյն ընկաւ Նէպոլցիների ետեից». էջ. 5— «Երբ
զօրքն ուղւում էր գլխաւոր հանգիստը առնել». էջ
6— «Գալացցին վերադարձաւ իր օթեակում», էջ. 13—
«Դեռ ալդ փոքր էր. մուտքը խափանուած էր...» էջ
17— «...ի րան վերականգն է իտալիայի առաջ». «...մա-
նաւանդ խոստովանանքը դու չարը գործ գրիր». էջ 37—
«Սակաւաթւերը, ամենահամարձակները միայն արհամար-
հեցին...» էջ 68 — Գործ են ածուած այսպիսի բառեր. «սա-
նովնիկներ», «ալարմիտո», «օրիգինալ», «մունիքիպալական»,
«մունիքիպալականութիւն» և այլն:

Արդեօք ինչ է նշանակում. «Նրա քարոզների արդիւն»

քըն ալն եղաւ, որ նրա հետ անկարող է հաւա-
սարեւել մինչև անգամ մօտմինեօր Դիւպանլուն, էջ 4—

Բոլորովին անհասկանալի են հետեւեալ պարբերութիւն-
ները. «Վենետիկ վերադառնալով, Գալացցին շարունակեց
ժողովրդին ամենավճռական կերպով համոզել, Նրբեմն նա
ալնտեղ արմատական կուսակցութեան օրգան
էր, որ կազմակերպւած էր «ժողովրդական ա-
կումբ» անունով, բալց չափաւոր մարդիկ, ո-
րոնք դեռ դարձեալ լոյս ունէին օրինական
միջոցներով օգտուել՝ դռան, որ Գալացցու քա-
րօղները չափից դուրս լանդուդն են և սթարե-
կարգութեան կոմիտեաւրոյ ոչ միայն արգելեց նրան քարոզել,
ալլ մինչև անգամ խնդրեց հեռանալ Վենետիկից» էջ 6—

«Սրանից անկախ—Գալացցու քարողներէ մէջ
գործերի դրութեան մասին լուսաստոր հաշեացք-
ներ և ալդ գործերին ընդհանուր բարոյակա-
նութեան պահանջներ լարմարեցնելու հմտու-
թիւն, որոնք ամեն քաղաքացու պարտականութիւններն
են կազմում», էջ 15—16.

Ափսոս նիւթ.

3. ՊՐՕՓ. Ի. ԲԵՐԴԵՆԻՍՏՆԱՅԻ. Նոր պետութեան վերա-
ընդմուծը ղէպի կրօնը. ռուս. թարգ. Գ. Ալթունեան.
խմբագրութեամբ Ս. Տիգրանեանի. 1902. Ալէքսանդ-
րապօլ.

Մինչև ակօմ մենք սովոր էինք հալերէն գրքերի ճակա-
տին գրողմուած տեսնել՝ հեղինակութիւն կամ թարգ-
մանութիւն (Փիլիպոսեանցի) և հրատարակութիւն
(Մարտիրոսեանցի). այս գրքովը մի նոր երեւթ է հանդէս
բերում. նրա կազմի վրայ գրուած է՝ «ուսերէնից թարգմա-
նեց Գէորգ Ալթունեան, խմբագրութեամբ Ս. Տիգ-
րանեանի»: Մէկի թարգմանութիւնը լոյս է տեսնում մի
ուրիշի խմբագրութեամբ. արդեօք խմբագրութիւն զա-
ղափարն ինչ մտքով է գործածուած. նիւթի ընտրութիւնն
ու մի էջից բաղկացած ծանօթութեան գրեւն է խմբագրու-
թիւն, թէ խմբագրողը սրբադրել է ըսն թարգմանութիւնը.